ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 81-Ա «12» հունվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի Հ.2869-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 588.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Նարինե Ռոստոմյանի լ/ա Արա Ամիրջանյանի դիմումը՝ Զ.Անդրանիկի փողոց հ.113/1 հասցեում գտնվող 588.0քմ հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31052013-01-0195 վկայական) զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 2005թ. դեկտեմբերի 27-ի հ. 2869-Ա որոշումը, հողամասի համար 2006 թվականի փետրվարի 3-ին կնքված հ.221 վարձակալության պայմանագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշումով.

1. Լիազորել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Նարինե Ռոստոմյանի հետ կնքել համաձայնագիր՝ Զ.Անդրանիկի փողոց հ.113/1 հասցեում գտնվող 588.0քմ մակերեսով հողամասի համար 2006 թվականի փետրվարի 3-ին կնքված հ.221 վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ